Région

Provence-Alpes-Côte d'Azur

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# Համաձայնագիր

2012-2014 թթ համագործակցության վերաբերյալ

## Կողմերը

Պրովանս-Ալպեր Լազուր Ափ Ռեգիոնը, ի դեմս Ռեգիոնալ խորհրդի նախագահ, պարոն Միշել ՎՈԶԵԼԼԻ, նստավայրը Ֆրանսիայի Հանրապետություն, ք.Մարսել, Ժյուլ Գեսդ հրապարակ 27,

**Մի կողմից.**

Եւ Լոռու մարզը, ի դեմս Լոռու մարզպետ, պարոն Արթուր ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ նստավայրը Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Հայկի հրապարակ, մարզպետարան,

**Մյուս կողմից.**

**Գտնելով՝**

- **Համագործակցության համաձայնագրերի օրենսդիր նոր շրջանակը**

Այսուհետ հարկ է գործել ֆրանսիական օրենսդրական դաշտի փոփոխության և մասնավորապես տարածքային համայնքների ընդհանուր օրենսգրքի L.1115-1 հոդվածի դրույթների ճշգրտումով (2007 թվականի փետրվարի 2-ի N2007-147 օրենք, տարածքային համայնքների և դրանց խմբերի արտաքին գործունեության վերաբերյալ), որը ենթադրում է համագործակցության կամ տարածքային համայնքների և դրանց խմբավորումների զարգացմանն աջակցության տեսակը, նախատեսված գործողությունների առարկան և ֆինանսական աջակցության նախնական չափը՝ համաձայնեցված տեղական իշխանությունների հետ:

- 2008 թ. հունիսի 19-ի Պրովանս-Ալպեր Լազուր Ափ Ռեգիոնի և Լոռու մարզի միջև կնքված երկկողմանի համագործակցության շրջանակային պայմանագրի 4-րդ հոդվածն ամրագրում է ամենամյա կամ բազմամյա համաձայնագրերի ստորագրում.

- Կողմերի դերը միջազգային համագործակցության ռազմավարություններում

Ֆրանսիան և Հայաստանը երկկողմանի սերտ համագործակցում են՝ իրականացնելով բազմաթիվ ծրագրեր, իսկ տարածաշրջանի ակտիվ

անձինք գործում են ի նպաստ հանրային (ազգային) շահի, ունենալով փոքր և մոտ գտնվելով տարածքին, իրազեկ են բնակչության և տարածաշրջանի առանձնահատկություններին: Կողմերը ցանկություն ունեն զարգացնել համագործակցության շարժընթացը հետևյալ առաջնային բնագավառներում, որոնք կապված են ունակությունների ամրապնդման հետ. կառավարում, տարածաշրջանային քաղաքականության մշակում, տնտեսական զարգացում, մասնագիտական վերապատրաստում, սոցիալ - տնտեսական և համերաշխ զարգացում:

Այս գերակայությունները համապատասխանում են Պրովանս-Ալպեր Լազուր Ափ Ռեգիոնի միջազգային ռազմավարությանը, համաձայն 2008թ. դեկտեմբերի 12-ի ռեգիոնալ խորհրդի N08-267 որոշման: Այդ ռազմավարությունն ընդգծում է, որ տնտեսական, սոցիալական, բնապահպանական մարտահրավերներին դիմակայելու համար պետք է հաշվի առնել տարածաշրջանային արդիական խնդիրները:

**Վերը նշված կողմերը ընդունում են.**

**Հոդված 1. Համաձայնագրի առարկան**

Սույն համաձայնագիրը ներառում է 2012, 2013 և 2014 թվականների համար նախատեսվող գործողությունների օբյեկտը և ֆինանսական օժանդակության նախնական չափը

**Հոդված 2. Վավերական է**

Սույն համաձայնագիրը վավերական կլինի ստորագրվելուց, երկու շրջանների կողմից համապատասխան ընթացակարգ անցնելուց, վերջնական հավաստումից հետո և վավեր կլինի մինչև 2014թ-ի դեկտեմբերի 31-ը

**Հոդված 3. Գործողությունների պլան**

| 2008թ-ի համաձայնագրով հաստատված համագործակցության գերակա բնագավառները | Ընդգրկված ուղղությունները | ՆԱԽՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | |
|---|---|---|---|
| | | ՊԱԿԱ ՌԵԳԻՈՆ | ԼՈՌՈՒ ՄԱՐԶ |
| ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | Ֆրանկոֆոնիա | 15 000 եվրո | |
| ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ | Գյուղական տուրիզմ և ագրոտուրիզմ | 80 000 եվրո | |
| ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | Անասնապահություն | 40 000 եվրո | |
| ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ/ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ | Համերաշխություն | 40 000 եվրո | |

**Հոդված 4.Արդյունք եւ գնահատում.**

Երկու կողմերը մշտապես կհետեւեն համաձայնագրի հոդվածների իրականացմանը, կկատարեն գործողությունների գնահատում:

Սույն համաձայնագիրը կազմված է երկու իրավազոր օրինակից՝ ֆրանսերեն եւ հայերեն:

Կնքված է՝ 10 դեկտեմբերի 2012թ., ք.Մարսել

1 5 FEV. 2013

Պրովանս-Ալպեր Լազուր Ափ Ռեգիոնի կողմից

Միշել ՎՈԶԵԼ

Լոռու մարզի կողմից

Արթուր ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Région

Provence-Alpes-Côte d'Azur

Région de Lori

# CONVENTION

## *SUR LES ACTIONS DE COOPERATION 2012-2014*

**Entre**

La Région Provence- Alpes- Côte d'Azur, sise à l'Hôtel de Région, 27 place Jules Guesde à Marseille (France) représentée par le Président du Conseil régional Provence- Alpes- Côte d'Azur, Monsieur Michel Vauzelle

**D'une part,**

**Et**

La Région de Lori, sise à l'Hôtel de Région, Place Haïk à Vanadzor (République d'Arménie), représentée par le Gouverneur, Monsieur Arthur Nalbandian

**D'autre part,**

**Considérant**

- **Le nouveau cadre législatif qui s'impose aux accords de coopération:**

Il convient désormais de procéder aux ajustements induits par l'évolution de la législation française et en particulier aux dispositions de l'article L.1115-1 du Code général des collectivités territoriales (Loi n° 2007-147 du 2 février 2007 relative à l'action extérieure des collectivités territoriales et de leurs groupements) qui conditionne la conduite des actions de coopération ou d'aide au développement des collectivités territoriales et de leurs groupements à la conclusion avec les autorités

locales étrangères de conventions précisant l'objet des actions envisagées et le montant prévisionnel des engagements financiers.

- L'article 4 de **l'Accord-cadre de coopération bilatérale** entre la Région Provence-Alpes-Côte d'Azur et la Région de Lori, signé le 19 juin 2008, qui prévoit la signature de conventions d'application annuelles ou pluri annuelles ;

- **Le rôle des Régions dans les stratégies de coopération internationale**

La France et l'Arménie entretiennent d'étroites relations de coopération au travers de nombreux programmes bilatéraux ; les acteurs territoriaux viennent en soutien à l'action nationale par leur pratique et leur proximité des actions de terrain, au plus près des populations et des besoins spécifiques des territoires.

Les deux Régions souhaitent le développement de dynamiques de coopération dans des domaines prioritaires relevant notamment du renforcement des capacités dans le domaine de la gouvernance, de la gestion des politiques territoriales, du développement durable, de la formation professionnelle, de l'économie sociale et solidaire.

Ces priorités correspondent à la Stratégie internationale de la Région Provence-Alpes-Côte d'Azur, approuvée par délibération du Conseil régional n° 08-267 du 12 décembre 2008. Cette stratégie souligne la nécessité de prendre en compte la pertinence de l'échelle territoriale régionale pour affronter les grands défis économiques, sociaux et environnementaux.

**Les deux Collectivités susmentionnées conviennent :**

**Article 1 : Objet de la convention**

La présente convention précise pour les années 2012, 2013 et 2014, l'objet des actions envisagées et le montant prévisionnel des engagements financiers.

**Article 2 : Entrée en vigueur**

La présente convention entrera en vigueur après sa signature et son adoption définitive suivant les procédures propres à chacune des deux Régions et prendra fin le 31 décembre 2014.

**Article 3 : Plan d'actions**

| Domaines de coopération prioritaires établis par l'Accord-cadre de 2008 | Axes d'intervention 2012-2014 | Montants prévisionnels | | |
|---|---|---|---|---|
| | | Région PACA | Région de Lori | Autres |
| CULTURE ET EDUCATION | Francophonie | 15 000 € | | |
| TOURISME | Tourisme rural et agritourisme | 80 000 € | | |
| DEVELOPPEMENT ECONOMIQUE | Elevage | 40 000 € | | |
| SANTE/FORMATION | Solidarité | 40 000 € | | |

**Article 4 : Bilan et évaluation**

Ces actions feront l'objet d'un suivi régulier et d'un bilan-évaluation en fin d'exercice.

Fait en deux originaux, chaque exemplaire en français et en arménien

Le ..1.5.FEV..2013.... à..................................

Pour la Région Provence-Alpes-Côte d'Azur

**Michel VAUZELLE**

Le..........................à....................................

Pour la Région de Lori

**Artur NALBANDYAN**